



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LG7

1602

916

1999

Handwritten numbers and scribbles at the top left, including '27' and '1875'.

ՌՎ Է

ՄԵՂԱԻՈՐ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ

Յ. Ա.



Ա. ՏԵՅԻՍ Գ. Բ. Ե. Ը
29 CENT 95

(Տպարանի տպագրության վրա
կատարվող ամսական
անդրադրումները)



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏՆՍԱՆ

— 1875 —

27



Անտիքն, երբ այս տետրը կար-
 դաք, ուշադրութիւննիդ դարձու-
 ցէք ձեր կանանց վրայ, թէ ա՞րդեօք
 սովորականէն դուրս հարուստ մը չը
 յաճախեր ձեր տունը, կամ ձեր
 կիներ չընդունիր ա՞րդեօք հասակա-
 ւոր, աղէկ զարդարուած կին մը,
 ըստ որում, անդամ մը իմացէք այս
 անհերքելի ճշմարտութիւնը որ, —
 եթէ անան ծառերէն դերեւներ կ'էջնան, սհո
 ւան դառի է որ բարձուն ու սկոբը եր կանայք
 էնու. . . :



41602-60

38 1609

Ո՛Վ Է ՄԵՂԱԻՈՐ

ԱՆԿԵՂԾ ՍՐՏԻ ՆՈՒԷՐ

Ա Ն Ո Ն Յ

ՈՐԳ ԱՅՍ ՏԵՏՐԻ ԱՌԻԹՈՎ

ՀԱՅ—ՏԻԿԻՆՆԵՐՈՒՆ

ՊԱՇՏՊԱՆ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՆԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂՆ

Մի՛ կարծեր ընթերցո՛ւղ թէ քարոզ պիտի կարգամ, ո՛չ, քարոզչի մը ունեցած յաբմարութիւնքը չունիմ: Ես մաքառելու կարեւորութիւն կը գգամ միայն՝ այն վիթխարի թշնամոյ հետ, որն՝ որ այս վերջի՛ քսան տարին սկսաւ ապականել մեր կանանց բարքը և որուն դէմ դնել՝ ամենաճարտար քարոզներն անգամ անզօր պիտի դանուին: Ես պիտի յարձակիմ վրան իր բազմաթիւ զրհերու հետ միասին, որոց կեանքը պիտի ցուցնեմ. թող անոնց բարոյական անկման հետ՝ ինքն ալ իյնայ և անոնց կրած տառապանաց և մեղաց ծանրութեան տակ՝ ինքն ալ ընկճի և ջախջախվի: Ս, յս պիտի ուզեն և այս պիտի ցանկան աղնիւ սիրտ և խիղճ ունեցող մարդիկ, որպէս զի չ'անհետանայ յարգանքը՝ որ իւրաքանչիւրը մեզնէ պարտական է ցուցնել մօր, կնոջ և աղջկան. այս յարգանքը — հըբի — պիւրն, ա-

աանց որոյ ժողովուրդը և ընկերութիւնը
չեն կրնար ըլլալ :

Ես պիտի ցուցնեմ ձեզ զեզրաւթեան
այն բազմութիւ զրհները, որոնք անհաւա-
տալի կերպիւ սկսան բազմանալ ասկէ 20
տարի առաջ՝ երբ ոսկին կարճ ատեն մը
ամենուն ձեռքը անցաւ, բայց հազիւ
թէ մատներով սկսան շոշափել, երբ
դարձեալ անհետացաւ, թողլով իր ետե-
ւէն զեզրաւթեան և պճնասիրութեան
գէշ սովորութիւնը, որն որ կանայք չեն
կրցեր ձգել :

Ազնիւ և ուղիղ միջոցներով կանանց
պճնասիրութիւնը չկրցաւ իրենց սննդեւ,
այդ սլատճառաւ ալ իր առաջին պաշտ-
պանը վարոց ապոհանութիւնը ըրաւ : Ա-
մուսնոյ քսակը պարպելէն ետքը՝ կինը
սկսաւ ուրիշներու քսակն ալ պարպել,
վճարելով՝ անպիտան մամոնայի փոխա-
րէն, իր մաքուր մարմինը, որպէս զի,
կարող ըլլայ փայլիլ այն բարձր երե-
կոյթներուն մէջ՝ ուր տեղ դտնուող տի-
կիներէն շատ քիչը կրնան պարծիլ իրենց
վարուց մաքրութեամբ և ամուսնական
պարտուց հաւատարմութեամբ :

Շո.այլութիւնը ներկայիս մէջ անպար-

կեչտութեամբ կ'ապրի, իսկ վերջինս ալ
չոայլութիւն կը շնչէ : Այս երկուքը մէկ-
զմէկ օղնելով և կերակրելով՝ այնչափ
բռնացեր են մարդկային ազգի վերայ,
որ ամուսնութիւն բառը իր շատ մը ա-
նուշութեանը հետ՝ շատ մ'ալ սարսափ
կ'ազդէ երիտասարդներուն. իսկ ամուս-
նացելոց մէջ փոխադարձ երկիւղ և կաս-
կած կը յարուցանէ դէպ 'ի իրենց զա-
ւակները : Ըսածնիս կը վերաբերի այնու-
հան Քարլը Դասի կանանց, մանաւանդ Փա-
րիզու և ընդհանրապէս Գաղղիոյ կա-
նանց, որոց տարեկան եկամուտնին ոչինչ
մ'է ըրած ծախսերնուն նկատմամբ :

Այդ մեղքը, որմէ ըստ երեւոյթին ա-
մենք կը դարչին, տարածուեր է ամեն
տեղ, զբաւեր է ամենը, սկսեալ առջի
գեղեցկուհիէն որ դեռ նորերս մեծ պա-
րահանդէսի մը մէջ կ'զմայլեցընէր զա-
մենք իր գեղեցկութեամբ, և որ աւելի
եւս փայլելու համար, սուղ արժողու-
թեամբ ծաղկեայ նոր զարդ մը առաւ,
իր միակ փոքրիկ աղջկան ագամանդեայ
օղերը գրաւի դնելով՝ մինչ 'ի այն դըք-
սուհին, որուն ամուսինը (ինչպէս յայտնի
է այս անցքը շատերուն) կրցաւ 800,000

Ֆրանգ պարտք ընել այն գոհարեղինաց գրաւականով՝ զորս գտաւ իր կնոջ զարդի պահարանին մէջ :

Այո՛, պճնասիրութիւնը այնպիսի անհրաժեշտ պահանջողութիւն է դարձեր, ինչպէս կերակուրը որ կ'ուտենք, նա բացեր է կանանց համար թշուառութեան դուռը, այնպէս որ, իշխանուհոյ մը տասը տարեկան դստեր վրայ նայած տեսնդ, երբ տեսնես պաճուճապատանք մը ձեռքին՝ կարելի է հաւատի ըլլալ, որ առեն մը, (եթէ այս չարիքը չանհետանայ) երբ մեծնայ ու հասակը առնէ, քանի մը կանգուն մետաքսեղէնի համար պիտի ծախէ զինքը :

Սկիզբները երբ կը խօսէին ֆարիզու վարուց ապականութեան վրայ, ամենի ըսածնուն չէի հաւատար. ես կը կարծէի թէ՛ այդ անբարոյական ախտին ենթարկեալ են միայն այն դժբախտ արարածները, որոնք անօթութենէ չմեռնելու համար այդքան սոոր են ինկեր . իսկ թէ՛ այդ անբարոյական ախտը կը թագաւորէ և ազնուականաց ու հարուստներու կանանց մէջ՝ ես կամ չէի հաւատար կամ կը զարմանայի, որուն պատասխանը այս

էր . յաղէկ մը դիտէ և կը համոզվիս : Յիրաւի, շուտ մը համոզվեցայ, երբ՝ շատ հարուստ անձի մը քով, հանդիպեցայ քսան ու հինգ ամեայ գեղեցիկ կնկան մը, որ անկէ թոշակ կ'ստանար, մինչդեռ իր ամուսինը (հաստատ գիտեմ) 100.000 Ֆրանկի եկամուտ ունի ներկայ յիս մէջ, և քանի մը տարիէն 500.000 պիտի ունենայ :

Գիտեմ, չարիք մը չէ կարելի բնաջինջ ընել, թէեւ մէկ անգամ ըսածդ հարիւր անգամ ալ կրկնես, քայց գոնէ, այսչափ համոզված եմ, որ այս ցաւալի իրողութիւնքը հրատարակելով՝ կարելի է տեսակ մը միցում ընել չարեաց հետ և անոնք, որք դեռ նոր կը պատրաստուին իյնալ թշուառութեան անդունդը, ցուցընել իրենց վնի խորութիւնը, ցուցընել այն զարհուրելի չարչարանքները որ հոն կը գտնուին, թերեւս այս միջոցիւ, քանի մը նոր ինկնող գոհեր ազատելով՝ կորուստեան մատնուողներու թիւը քիչցընենք :

Ահա՛ այս իմ է նպատակս, և ես խորհուրդ կու տամ այն ամուսնոց, որոնք պիտի կարդան այս տողերը, աղէկ մը

մտածեն — ի՞նչ նշմարեր արբեւոյ իրենց որան
ժե՛ղ այն Բաները որ հիմայ պիտի պատմեմ, —
բռնցմով կանայ՝ կ'իյնան Բարոյադէս :

Օրինակի համար . խօսենք այն կնոջ վե-
րայ, որուն շուպուրեան գէշ հետեւանք-
ները սկսեր են շրջապատել :

Առջի անգամ պարտք ըրաւ , առանց
ինքն ալ դիտնալու , կամ եթէ կարելի
է այտոյէս ըսենք , անգամ մը պարտք
ըրաւ , ամուսինը խսկոյն վճարեց , երկ-
րորդ և երրորդ անգամ նոյնպէս . բայց ,
վերջապէս յայտնեց իր շատ սիրելի և
անբաժան կենակցին՝ որ , — այլ եւս
անոր պարտքերը վճարելու ամենեւին դի-
տաւորութիւն չունի :

Չնայելով ամուսնոյն ըսածին , կիներ՝
կը շարունակէ դարձեալ փայլլլ : Եւ ի՞նչ-
պէս չփայլի , ուրիշ ի՞նչ կրնայ ընել . բայց
ահա՛ , հասաւ այն ժամանակը , առանց
ինքն ալ կարող ըլլալու նկատել թէ՛ այն-
պիսի դրութեան մը մէջ կը գտնուի , որ
եւքի հնար չունի . մինչեւ անգամ , ամեն
բան ճշմարիտը խոտոտովանիլ անկարելի
է . և ահա կ'սկսի սուտեր խօսիլ :

Առջի անգամ ըրած ծախսերուն մասին
բացատրութիւն մը տալու համար , կը

համոզի ամուսինը թէ՛ այդ ստակները
գաւառէն , այն ինչ ազդականէն կ'ստա-
նայ , որն որ շատ կը սիրէ զինքը (որմէ
տասը փարա անգամ չէ ստացեր) : Քանի
մը անգամ ալ ատոր նման ուրիշ սուտեր
կ'ըսէ , այնպիսի ճարտար սուտեր՝ որ
ամուսնոյն սրտին մէջ ամենեւին կասկած
չմտներ . և այդ սուտերը կը շարունակէ ,
մինչեւ որ , ամուսինը , իր կնոջ , իրմէ
ստակ չարահանջելուն համար , անգիտակ-
ցաբար , տեսալ մը սովորութեան կ'են-
թարիլի . — Հարցընե՛ր այլ եւս ոչինչ
բան , չառնել ոչ մէկ հաշիւ , որ անոր
զարդերուն կը վերաբերի :

Կը տեսնէ՞ք , ո՛րչափ թշուառ են և ցա-
ւակցութեան արժանի այն ամուսինք ,
որոնք կ'երեւակայեն թէ՛ իրենց կիները
իւրաքանչիւր տարի 13 կամ 20 հազար
Փրանկի դրեստ ու զարդ կը դործածեն ,
մինչդեռ հարիւր հազարն ալ կ'անցնի .
բայց երբ կու գայ վճարման անխուսա-
փելի օրը՝ առջի անգամ , քանի մը հա-
զարի արժէթ-ղթերով՝ որ կրցեր են սրտա-
կից բարեկամահիներէն պարտք ընել ,
կ'ազատին այդ դժուարութեանն : Երկ-
րորդ անգամին , կը դիմեն մերձաւոր

ազգականաց , որոնք քիչ մը ստակի հետ
 չեն զլանար և վիրաւորական խրատներ
 տալ , որպէս զի ուրիշ անգամ այլ եւս
 չգիմէ իրենց . խկ երրորդ անգամին ,
 ինքն ալ չըխտէ ինչ ընէ : Բայց ո՛չ , կայ
 դեռ եւս հնարք մը , — յիշել ծանօթ
 հարուստ երէրասարդներուն . . . : Այդ
 միջոցին իր զգացած ամօթին կ'ընկերա-
 նայ երկիւղը և կ'սկսի վախնալ իր ամուս-
 նոյն բարկութենէն , որն որ ինքը կը սիրէ
 և ամուսինն ալ , որ կը կարծէ թէ իր կինը
 հրեշտակ մ'է :

— Ես անմեղ եմ , կ'ըսէ դժբաղդ կի-
 նը . բայց երկտասարդներէն ըրած փո-
 խառութեանցս համար կրնայ ըլլալ որ
 ամուսինս կասկածի ու ձգէ զիս : Ո՛հ ,
 այդ անկարելի է , երկուքնիս ալ զիրար
 կը սիրենք , կերպիւ մը այդ դրութենէն
 ազատիլ հարկ է :

Ահա այդ միջոցին՝ նա մտեցեր է ան-
 դունդին . և ասոնցմէ ամենէն աւելի զար-
 մանալին ո՞րն է . կինը կ'ուզէ բարոյա-
 պէս իյնալ , որպէս զի իր ամուսնոյն սի-
 րոյն դարձեալ արժանի ըլլայ և չբաժ-
 նուի անկէ : Բայց որչափ որ ալ մօտ է
 անդունդին , որչափ որ ալ ուղիղ ճա-

նապարհի վրայ ետ դառնալու միջոցները
 հատեր են , այսու ամենայնիւ , — Բեռ-
 շա՛ք Բանը կն՛ մը յիշու- շէ կրցեր կար-
 բել :

Այո՛ , առանց սաշտպանի , առանց երկ-
 րորդի մը օգնութեան , մեր սպասած
 կինը ապականութեան գիւրիլը չէ կարող
 իյնալ . բայց դժբաղդաբար , վարուց ա-
 պականութիւնը հաղարաւոր դիւրութեան
 միջոցներ ալ ունի , որպէս զի օգնէ առա-
 քինի կանանց բարոյապէս իյնալուն :

Վերոյիշեալ կինը կը նմանի այն անձ-
 նասպանին , որ հաստատապէս վճուեր է
 մեռնիլ , բայց կը վախնայ զարնել զինքը .
 կը զարհուրի ջուրի խորութենէն , կը սար-
 սափի պատուհանի բարձրութենէն , ու-
 րիշ մը պիտի ըլլայ որ զնտակը ուղղէ
 ճակտին , երկրորդ ձեռք մը հարկաւոր
 է որ միտէ սուրը իր կուրծքը և այլն . և
 եթէ կամաւոր մեռնողներու համար ուրիշ
 ձեռք մը չկայ որ այդ դառն սաշտօնը
 կատարէ , բարոյականապէս ինկնող կա-
 նանց համար երկարք մը կայ , որ վատու-
 թեամբ պատրաստ կեցեր է դահավիժե-
 լու իր զոհին մեղքի անդունդը : Այդ
 երկրորդը — ազնուական — միջնորդ կին

ըսուածներն են, որոնք աշխարհիս մէջ
 գտնուած ամենէն ազեղ, զգուելի, ար-
 համարհանաց արժանի, սեւ հոգի ու սեւ
 խիղճ ունեցողներն են:

Աշխարհիս միջնորդ կէս . . . կ'զգամ, որ
 արտասանելով այս խօսքը, պահ մը պէտք
 է դադարիմ, որպէս զի հաստատեմ, թէ
 ես ինձմէ բան մը չեմ հնարեր, որ կոմ-
 սուհեաց, իշխանուհեաց և հարուստնե-
 րու տուները կը յաճախեն միշտ նոր գո-
 հեր միտուելու, որն որ դժբաղդաբար
 միշտ կը յաջողին և երբէք պարապ չեն
 մնար: Ասոնք կը ճանչնան բոլոր հարուստ-
 ները, գիտեն անոնց տարեկան եկա-
 մուտնին, ըրած ծախքերնին, ունեցած
 բնաւորութիւննին, գիտեն այր և կնոջ
 յարաբերութիււքը, գիտեն թէ երիտա-
 սարդ կին մը իր դերձակին որչափ պարտ
 է, հատուցման ժամանակը երբ պիտի
 լրանայ, քանի անգամ խօսքի վրայ չեն
 կեցած և այլն:

Կան ուրիշ տեսակներ ալ, որոց մասին
 վարը պիտի խօսիմք:

Այս երկուքս շեշտ միջնորդ — կիները
 անոնք են, որք թէեւ իրենց անձնական
 գեղեցկութեամբ բան մը չեն կրցեր ընել,

բայց անցեալ դեղիս կենաց գէշ սովորու-
 թիւնը ձգել չկարենալով՝ միշտ նոր մի-
 ջոցներ կը բնտուեն դեռ չմարած փա-
 զաքնին յաղեցընելու և որովհետեւ մո-
 լութեան ճամբուն մէջ ամենէն վոր-
 ձուածները ասոնք են, ուստի և իրենց
 խնդրած զոհերնին ամենէն շուտ
 կրցեր են ձեռք ձգել: Ասոնք միշտ ա-
 ուանձին կ'ելնեն, որոնց կարելի է տես-
 նել թէ՛ պաշտօնական և թէ՛ ընտանեկան
 մեծ պարահանդէսներու և հացկերոյթ-
 ներու մէջ: Ասոնց խկական ինչ ըլլալնին
 բոլորովին ծածուկ է ուրիշներէն և այդ
 պատճառաւ ալ կրցեր են շատ անգամ
 բարենպատակ գործոց և հանգանակու-
 թեանց բարձր պաշտպանուհութեան
 տիտղոսը ընդունել և նախագահ ըլլալ:

Բարեմիտ ընթերցողը թերևս գիտէ
 այդ պաշտպանուհիներէն մի քանիին ա-
 նունները. բայց մեր խօսքը մասնաւորի
 համար չէ, այլ միջնորդ կանանց ընդ-
 հանուր շեշտը, ինչ ըլլալը կ'ուզենք ցու-
 ցընել: Ասոնք ամենէն գործունեայներն
 են, որք մեծ եռանդով՝ բարի քրիստոնէի
 մը զգացմամբ վառեալ, կ'սխիսն հանգա-
 նակութեանց պտըտիլ որբ բայց գեղե-

ցիկ օրիորդաց հետ՝ զանանք ալ իրենց հետ պարտցընելով՝ որոց ժպիտը ամենա-
 ժլատ քսակներն անգամ կրցեր է բա-
 նալ : Երբեմն ալ, ներկայացումէ կամ
 պարահանդէսէ մը եկած հասոյթը յանձն
 կ'առնուն հասցընել ուր որ հարկ է .
 բայց ինչպէս կը հասցընեն, ինչ բաժին
 կու տան այն օրիորդաց որք իրենց անուշ
 ժպիտով կրցեր էին ժլատի մը սիրտը
 մեղմել, ընթերցողը կրնայ դադարար ու-
 նենալ : Ստոնք այսպէս ըսուած «հրէա-
 կան համբերութեամբ և գերմանական
 յամառութեամբ» կըսկսին իյնալ այն երի-
 տասարդ կանանց և օրիորդաց ետեւէն,
 որոց մասին հարուստ սեղանաւոր մը խո-
 «նք է իրենց հետ . . . : Հարկ չէ մանրա-
 մասնաբար ըսել թէ՛ ո՛րչափ ընդունակ
 և ո՛րչափ փորձառու ըլլալու է ազնուա-
 կանաց և հարուստներու սիրահարու-
 թեանց Ենթերկերու», որպէս զի անպար-
 կեշտ բան մը առաջարկուելու ատեն՝ չը
 վիրաւորէին քնքոյղ ընաւորութիւնքը, ո-
 րոնք երազել անգամ չէին կրնար, թէ
 օր մը, մէկը պիտի համարձակի այդպիսի
 դարչելի բանի մը համար ոչ թէ խոր-
 հուրդ տալ, այլ ակնարկութիւն մը ան-
 գամ ընել . . . :

Անգամ մը նկատելով թէ այս ինչ կիրնը
 կարող է իյնալ, եթէ աշխատող մը ըլ-
 լայ՝ միջնորդ—կիրնը կըսկսի անմիջապէս
 ուսումնասիրել անոր դրութիւնը և բնա-
 ւորութիւնը, որն որ յաջողելէն ետքը՝
 վճարող մը կը գտնէ : Ալ ամեն բան
 ըննցաւ այդ վայրկեանէն սկսեալ . երի-
 տասարդ կիրնը ազատելիք չունի անոր ձեռ-
 քէն, սակաւ առ սակաւ կը հրոսի «նոր
 Գիրն . . . :

Երբեմն այս միջնորդ կանայք կրցեր
 են օդ ուտ քաղել իրենց դոհերու անձ-
 նական բարեսրտութենէն, որ յատուկ
 է երիտասարդ կանանց :

Օրինակ .

Գեղեցիկ օր մը, անուսկան միջնորդ—
 կիրնը աչքերը արտասուէքով լեցուն, ներ-
 կայացաւ կոմսուհի Պ. . . . ին, որուն
 գեղեցկութիւնը ամենը կ'զմայլեցընէր :

— Ո՛հ սիրելիս, եթէ գիտնայիր թէ
 ո՛րչափ զժրագող եմ, ըսաւ միջնորդ—
 կիրնը :

— Բայց կրնաս՞ ես ձեզի համար բան
 մը ընել :

— Ո՛հ ամեն բան, ամեն բան կրնաս
 ընել : Ամուսինս պիտի ստանայ այն երե-

ւելի պաշտօնը , որոյ մասին անգամ մը քեզի հետ խօսեք եմ . բայց այժմ ուրիշ մէկը կը մրցի այդ տեղւոյն համար : Այս անյարմարութիւնքը կը շտկուէին եթէ Պ. Լ . . . ըր ցանկանար :

— Այն պարոնը որ զիս ձանձրացուցեր է իր անպարկեշտ վարմունքովը , ըսաւ կոմսուհին արհամարհական կերպիւ :

— Այո՛ , իսկ և իսկ այդ անպիտանը և ևս կը տեսնես . դժբաղդարար , հարկադրեալ եմ քովը երթալ . բայց մինակ ինչպէս երթամ , ինչ կ'ընեն : Կ'աղաչեմ սիցեւի՛ս , օղնէ ինձ այս պարագայիս մէջ՝ ըս մէկ անուշ խօսքը . . . մէկ ժպիտը . . . կը փրկէ գմեղ : Եստ աղէկ դիտես որ այդ մարդիկ քիչ մը յիմար են , իսկ մեր կողմանէ աւելի մեծ յիմարութիւն կ'ըլլայ , եթէ քիչ մը չխնդ աւեր անոնց վրայ , որոց մեք կը հաճիմք . . . : Երթանք կ'աղաչեմ , քեզի համար այդ տասը բարայի նշանակութիւն չունի , իսկ մեզի համար մահու և կենաց խնդիր է :

Արդէն ըսի որ , երիտասարդ կիներ բարի է . մանաւանդ որ , ինքն ալ քիչ մը ուրախ է որ բաւական առեն տունէն պիտի մեկնի , ուր պարտատէրերը ան-

հանդիստ կ'ընեն զինքը . . . ուստի , դնաց Պ. Լ . . . ըր քովը :

Առաջին ԹՅՈՒՆ ԵՐԱՆ . . .

Առաջին ըսի , ըսա որում ճամբան սորվեցաւ , քիչ մը ետքը մինակ ալ կրնայ գալ , ժամանակը կը թոշի , իսկ անոր հետ ալ իր դրութիւնը օր ըստ օրէ կը գէշնայ :

— Ինչո՞ւ Պ. Լ . . . ըրին քովը չես ուզեր երթալ երբ այդպիսի նեղութիւն ունիս , կ'ըսէ անոր միջնորդ — կիներ , որ թէև ուրիշ կարեւոր գործի պատրուակաւ , բայց մասնաւորապէս այդ խօսքը ըսելու համար է եկեր քովը — տեսա՞ր ինձի համար խնդրեցիր , յաջողեցաւ , իսկ քեզի համար առաւել ևս պիտի յաջողի . . .

Կոմսուհին անմիջապէս հասկցաւ միջնորդին խօսքերուն զօրութիւնը , բայց չհասկնալու դրաւ . ըսա որում , բնական ազդումէն առաջացող արհամարհանքը զէպ'ի այդ վերջին ԹՅՈՒՆ ԵՐԱՆ , դեռ բողբոջին չէ մարեր դժբաղդ կնոջ սրտէն . այդ պատճառաւ ալ , սկսաւ սարսափելի կերպիւ վրդովիլ այդպիսի անամօթ առաջարկութիւն մը լսելով : Արպէս զի կարող ըլլայ հանել իր սրտէն այդ զգուանքը , որպէս զի ստիպէ լռեցընել իր վերաւոր-



ուած ինքնասիրութիւնը, հարկ է իրեն
 ոտնհար ընել շատ բաներ, որոց մասն
 կութենել 'ի վեր սուրբ է համարեր: Ինքը
 կը պատկանի ազնուական ընտանեաց,
 ունի սրտին մէջ պահած իր ընտանեաց
 վերարերևայ աւանդութիւնը, վերջա-
 պէս այն նախապաշարումը որ ազնուա-
 կանք ունին իրենց մասին, մինչդեռ այն
 մարդը՝ որու քով կ'ուզեն խաւրել, այն
 ստորական, այսպէս ըսուած քցատկը-
 տող՝ հորուստներէն մէկն է, որոնք աղ-
 նուակնաց օտքերը պիտի համբուրեն,
 որ այս վերջին սարիները անոնց երե-
 կութներուն և սարահանդէսներուն մէջ
 կ'ընդունուին: Ինչպէս, թքնել այս ա-
 մենուն վրայ և երթալ զինքը անոր ստա-
 կին ծախել . . .

Կարելի բուն է . . . կամ եթէ կարելի
 է, միթէ դիւրին է . . .

Բայց միջնորդ — կիները՝ ինչպէս ըսի,
 համբերող են և յամառ, ըստ որում,
 երկրորդ, երրորդ և հարիւրերորդ ան-
 զամ կը փորձեն:

— Ես բեզ չբոյ՝ որ երթամ Պ. Լ. . . ըին
 քովը, բայց դուն ինքդ շիանցար: Ըս
 գիտէ որ յետոն հազար Ֆրանսիը կը փրկէ

գլեզ: Այդ ստակները պատրաստ են,
 էն և սորաչէր . . .

Երբ կոմսուհին մինակ մնաց, սաստիկ
 մտատանջութենէ մը ետքը ըսաւ .

— Յիսուս հազար Ֆրանսիզ, ես կը վճա-
 րեմ բոլոր պարտքերս, վերջը ամուսնոյս
 հետ գիւղը կը մեկնինք և այլ շեմ տես-
 ներ այդ առելի մարդը: Խեղճ ամուսինս
 բան մը չգիտնար, դարձեալ կը սիրենք
 մէկըմէկ: Այս վերջին սխալմամբս՝ առջի
 մեղքերս կը գոցեմ:

Բոլոր այս կորստական վճիւրը, որ գի-
 շերը մթութեան մէջ կրցաւ ընել, լոյսը
 բացուելուն ոլէս՝ ամօթի, ինքնասիրու-
 թեան, ամուսնական երդման և խղճի
 խայթը սկսաւ տանջել, ուտել, խածնել
 զինքը. բայց կարիքը որ առաջացեր էր
 իր շուայլ կեանք վարելէն, անողբելի՝
 անբժշկելի և անխուսափելի կարիքը՝
 կեցեր է առջեւը . . .

— Չպիտի երթամ, չէ՛, ըսաւ աղէկուոր
 ձայնիւ գժբաղդ կինը և յուսահատած
 ինկաւ բաղկաթ ոտին վրայ. բայց վերջին
 մտածմունքը թէ՛ — չուտով ամուսինը
 պիտի խնայ որ պարտքեր ունի և կրնայ
 ըլլալ որ ձգէ զինքը. քիչ մնաց որ խելքը
 թոցընէր գլխին:

—Ո՛հ պիտի երթամ, ալ պիտի երթամ,
բայց ո՛չ, թող քիչ մ'ալ մտածեմ որ
այդ կորստական մեղքին ենթարկուելու
ոյժ ունենամ. . .

Սկսաւ հազնիկ, սովորականէն աւելի
գեղեցիկ, աւելի ճաշակով, ըստ որում,
ամենասարսափելի պարագայից մէջ ալ
կանայք իրենց զարդերը չեն կրցեր մոռ-
նալ: Յայտնի է ամենուն որ 1793 թուա-
կանին ֆարիզու կանայք գլխատման տեղը
երթալէն առաջ՝ մէյ մը հայելիի մէջ կը
նայէին և կը շտկէին զիրենք: Վերջապէս
այս անգամ սովորականէն աւելի գեղե-
ցիկ պիտի ըլլայ. շե՞ որ քեզիցիւնիւնը
ծեփելու կ'երթայ:

Տունէն ելնելու ատենը, երիտասարդ
կոմսուհին վախցաւ որ իր հոգւոյն ա-
րիութիւնը կորսնցընէ. այդ պատճառա-
ալ, սեղանատան քովէն անցնելով՝ ձեռք
զարկաւ անուշաօղիին: Հագիւ թէ կրցաւ
կլկել, և ահա կէս գինով շուտ մը կ'իյնայ
այսպէս ըսուած «եղեւթի մէջ»:

Սերեա՛. . . — Եւստակիանէրս և հարստո-
ւերս կանանց դաժողը և ուրիշ բան չէ:

Ի՞նչ կը մտածէ արդեօք այդ դաժողի
մէջ. թերեւս ոչինչ, այսինքն, մտքի

թմբութիւն, մտածելու անընդունակու-
թիւն շատ մտատանջութենէն, կամ
կրկնակի խայթ խղճի, ամօթի և ինքնա-
սիրութեան. բայց ինչ որ ալ ըլլայ, հար-
կագրեալ է մինչեւ վերջը քամել դաս-
նութեան բաժակը:

Ճամբան շատ երկար երեւցաւ իրեն.
բայց վերջապէս դադարը հասաւ իր դե-
րեղմանատունը:

Չայրացած, կէս մը գինով, այլալլած,
կատաղի յուսահատութեամբ, բայց ա-
մանցմով հանդերձ ժպիտը շրթանց վրայ,
երիտասարդ կինը ներս մտաւ. . . սեն-
եակներուն ըութիւնը գերեզմանական
պաղութիւն մը բերաւ վրան, սիրտը սկը-
սաւ զարնել, սաստիկ զարնել, սարսուռ
մը ամբողջ քիզերուն մէջ, շնչարգելու-
թիւն և ցնցիւն մը զգալով՝ բոլոր ոյժը
և վերջին ճիղը ժողովնց և առաջին խօսքը
Պ. 1. . . ըին այս երկրորդ անգամի գա-
լան, այս էր — Լարտորները գոյ՛
. . .
. . .
. . .
. . .
. . .

Այս բաները կ'ըլլան աւելի զարնան
էղանակին. պարտաւտէրերը իրենց հա-

չիւր կը ներկայացընեն սովորաբար նոր տարիին, ատկէ ետքը վճարման համար երեք ամիս ժամանակամիջոց կու տան : Սյդ երեք ամսուան մէջ կորստեան յանձնուած կինը կը սկսի պարտիլ այն տեղ ուր առջի մեղքը գործեց :

Ամուսինք, երբ այս տողերը կարդայք, ուշադրութիւնսի՞ք ձեր կանանց վրայ դարձուցէք, արդեօք սովորականէն դուրս ստէպ՝ հարուստ մը չի՞ յաճախեր ձեր տունը, կամ ձեր կինը չընդունիր արդեօք հասակաւոր, արէկզարդարուած կին մը : Հետեւեցէ՛ք, թերեւս կարող ըլլաք գոց աչքերնիդ բանալ, ըստ որում, անգամ մը իմացէք այս անհերքելի ճշմարտութիւնը որ, եթէ աշնան ծառերէն տերեւներ կ'իջնան, ահա քսան տարի է որ, — գարնան ալ սկսեր են կանայք իջնալ . . . :

Անգամ մը Պ. Լ. . . ըին ծախելով զինքը՝ կոմսուհւոյ փոթորկալից կեանքը սկսաւ . այլ եւս անկարելի եղաւ փախչիլ անկէ, ըստ որում այդ սկզբնական որոշումը անհետացաւ իր պատուոյ և մաքրութեան անհետանալուն հետ : Առջի անգամի ստացած ստակով, իրաւ է, ա-

պասեցաւ պարաքէն, բայց ետքը սկսաւ մտածել — մի՞թէ անոր համար ծախեց զինքը որ իր պարտատէրերը միայն գոհ ընէ, ինչո՞ւ ուրեմն հիմայ, երբ ստակի կարօտութիւն չունի, կրկնապատիկ չը փայլի . ըստ որում՝ վճարողը Պ. Լ. . . ըը սլիտի ըլլայ, իսկ ամուսինն ալ բան մը չսլիտի իմանայ :

Թերեւս ընթերցողը ըսէ թէ՛ կոմսուհին եթէ ուզենար, այդ պարաքէն անգամ մը ազատելն ետքը, ալ կրնար առջի անեղ կեանքը վարել : Ո՛չ, կը պատասխանենք, չէր կրնար, ըստ որում, միթէ անգամ մը զինքը գնող անձը՝ ալ կը ձգէ՞ հանգիստ : Ատկէ գտտ, անոնք, որք տեղեակ են իր գաղտնիքին — միջնորդ — կինը, իր աղախինը, Պ. Լ. . . ըի գոնէ մէկ ծառան, թերեւս մէկ երկու սրտակից բարեկամներ, վերջապէս պետեմները, որք միջնորդ — կանանցմէ պակաս սրկաներ չեն շայտմենց՝ գ/շատիչ թուչուններու նման՝ կը յարձակին վրան, կը վախճեն, կը քարոզարնեն զինքը, կը սկսին սաստիկ նշանշող ըլլալ . « ըրէ՛ այս բանը, ըրէ՛ այս բանը, վճարէ՛ այսպիսի, ոպտ թէ ոչ, — տե՛ն բան կը

յայտնենք . . . : Ահա այն սովորական ,
ամենօրեայ խօսքերը որ կը լսէ դժբաղը
կինը : Ի՞նչպէս պիտի կարող ըլլայ այս
ամենուն յաղթել , եթէ ոչ — ստակով ,
որ ըսել է թէ՛ երկրորդ և հարիւրերորդ
անգամ ալ ստիպեալ է Պ. Լ. . . բին
այցելութիւն ընել :

Այս տեսակ պարագաներով չըջապա-
տուած և իր աղախին ծառաներէն ան-
գամ հարստահարուած կին մը (1) ըստ

(1) Երբ այս տեսին աշխատութիւնը աւար-
տեցինք , որ մը իմ ծանօթ բժիշկներէն մէկուն
քովը կարգացի , որն որ ինձ հետեւեալ անցքը
պատմեց :

« Ես մէկ հարուստի մը կին կը բժշկէի , որն
որ երկու շաբաթ անկողնէն չեղնէլ հարկ եղաւ .
որ մը , իր աղախինը ներս մտաւ և իր տիկնոջ
քանի մը հաղոր ֆրանքի արժեթղթեր տուաւ
նամակաւ մը մէկտեղ : Տեղինը սուժօտն ինձմէ
Ներդառնալն ինչդեղով առաջ նամակը կարգաց
և վերջը սկսաւ արժեթղթերը համբը . մէկ ,
երկու և երեք անգամ , վերջապէս այլայլած՝ քսու
աղախնոյն :

— Հազար հինգ հարիւր ֆրանք պահաս է այս
տեղ ինչ որ նամակին մէջ կը գրեն :

— Կրնայ ըլլալ , երբեք հարձակուի պա-
տասխանեց աղախինը լրբութեամբ :

Դժբաղը հիւանդ կինը լռեց , կլեց այդ լրբ-

մեր կարծեաց՝ այլապէս չկրնար վարվիլ :
Այս բոլոր թշուառութեանց վրայ աւել-
ցուր նաև այն իրողութիւնը , որ վաս-
տըրիած ստակին կրցեր են միայն ուրիշ-
ներուն տալ և իրենց զարդերը կրկնա-
պատկելու գործածել , ըստ որում
կը վախնան որ պահած ստակինն օր մը
ամուսիննին նկատէ և ամեն բան յայտ-
նուի . և այսպէսով՝ հաղարները ձեռքէն
կ'անցնին , իսկ իրենց ապագան իր բոլոր
զարհուրելի հետեանքներով կըսպասէ զի-
րենք : Միշտ երկիւղի մէջ ըլլալուն համար ,
ալ սկսաւ մեր կոմսուհին ձանձրանալ իր
սեփհական տունէն , որն որ բանա մը ,
դժոխք մը կ'երևէր իրեն : Ա՛րուզէ փախ-
չիլ բայց ո՞ւր . արդեօք իր սիրողն քով :

բութիւնը և չհամարձակեցաւ խօսք մը անգամ
նկատել : Քանի մը անգամ կարմրեցաւ և կար-
ծեմ օստտիկ վարցաւ որ ես կարող էի հասկնալ
իր լռութեան պատճառը . . . :

Ի վերջոյ , այսպիսի քանի մը ուրիշ պատմու-
թիւններ ալ ընելէն ետքը՝ աւելցուց . « Կուգ
չէք կարող երեւակայել թէ տիկինը զազանիբին
տեղեակ ըլլող աղախիններու վայրենի անգթու-
թիւնը մինչի ի՞նչ աստիճան է : Ամենէն սարսու-
փեկի հարստահարողները ասոնք են , այսպիսի պո-
րտգայից մէջ :

զոր սարսափելի կերպիւ կ'ատէ և որուն չպիտի ներէ որ գնեց զինքը . . . :

Երբեմն այնպէս կը պատահի որ այս դժբաղդ կանայք մինչեւ վերջը կը սիրեն ամուսիննին, թէեւ լւրբաքանչիւր վայրկեան ստիպեալ են կեղծաւորի մը դեր խաղալ. խարել զիրենք, առ երեսս խընդալ. իսկ ներսէն լալ: Երբեմն ալ այդ սէրը ծայրայեղութեան կը հասնի և ահա, խիզճերնին հանգստացընելու համար, կեղծ հիւանդ կը ձեւանան և կը համոզեն ամուսիննին երթալ և երկար ատեն գիւղը բնակիլ և ասանկով միայն ամուսիննին կ'ուզեն սիրել և անցելոյն դառն յիշատակները մոռնալ:

Այսպէս ալ մեր պատմած կոմսուհին վարվեցաւ . իր ամուսնոյն հետ գիւղը մեկնեցաւ, բայց այն տեղ ալ հանգիստ չկրցաւ մնալ: Արողը պահանջեց, որ անմիջապէս ետ դառնայ, պահանջեց իր հրամայական կարճ և ազդու նամակաւը: Ի՞նչ կրնայ ընել, ծախուած ապրանքը կրնա՞յ բողբել: Հնազանդեցաւ և անմիջապէս գնաց: Պ. Լ. . . . ըը ատով ալ չբաւականացաւ և պահանջեց որ երկար ատեն, շարունակ իր հետ նստի:

կոմսուհին դարձեալ համաձայնեցաւ, թէեւ այս անգամ աւելի մեծ վտանգի ենթարկեց զինքը, ըստ որում իր սիրած ամուսնոյն խարեց թէ զաւառէն՝ այս ինչ բարեկամուհին որ իր ազգականն է և որու հետ կոմսը ինքն անգամ մի անբուականութիւն է ունեցեր, կը հրաւիրէ զինքը իր քով, որմէ յոյս ունի մեծ գումար մը նուէր առնուլ և այլ ասոր նման պատճառներ . . . կոմսը համաձայնեցաւ և ուղեւորեց իր կինը մինչեւ երկաթ ուղին, կարծելով թէ՛ իր կինը ազգականին քով պիտի երթայ, մինչդեռ կոմսուհին երկաթուղիէն ելնելով՝ առջի անգամ երբեք Պ. Լ. . . . ըն գիրք էնիւ . . . :

— Բայց եթէ իմանայ ամուսինս, որ մինչեւ այս աստիճան անզօրաբար խարեցի զինքը, ալ մի՞թէ պիտի խնայէ զիս, մի՞թէ իրաւունք ունի՞մ այլ եւս անկէ բան մը սպասել, ըսաւ կոմսուհին այս անգամ. իսկ պատասխանը ամիս մը ետքը ստացաւ իր սիրողէն, որն որ պահանջեց — բողբովին ձգել ամուսինը և միայն իր հետ ապրիլ . . . :

— Բայց նա իմ զաւակիս հայրն է, չեմ կարող, ի՞նչ կ'ըսեն ամենքը:

— Աշինչ չեն կրնար ըսել, ամուսնոյյ
 համար գաւառի մէջ երեւելի պաշտօն
 մը կը գտնամ, դուն տկարութեանդ
 պատճառաւ ֆարիզ կը մնաս, դարձեալ
 անոր կինը կը համարվիս, ան ալ դարձեալ
 գաւառից հոյրը կը կոչուի:

Հարուստ և ազդեցութիւն ունեցող
 անձանց համար, այս վերջին միջոցը
 դժուար բան մը չէ, ամուսինը կըստանայ
 ֆառաւոր պաշտօն գաւառի մէջ, իսկ
 կինը կը մնայ ֆարիզ . . .

Հագարաւոր օրինակներ կան այս մասին:

Ինչ ընէ դժբաղդ կոմսուհին, իր սի-
 րնի ամուսինէն բաժանեցին զինքը . սի-
 րոջս թէ իր տարիքով և թէ իր բնաւոր
 ութեամբը, սարսափելի զրուանք կը
 պատճառէ, զաւակը օր մը չէ կրցեր
 տեսնել, իր աւագան աղէկ բան մը չը
 գուշակեր, թէ՛ կըզգայ և թէ՛ կը հաս-
 կընայ որ այս ամեն ըրածները օր մը
 սարսափելի հեռեւանքով պիտի վերջա-
 նան . ուրեմն, աղէկ չըլլա՞ր արդեօք,
 որ գտնէ այս ամեն զրկանքներու փոխա-
 րէն՝ ուրիշ նոր հաճոյքով մը զինքը վար-
 ձատրէ և ահա Պ. Լ. . . րէն ծածուկ,
 երիտասարդ սիրող մը կ'ընտրէ, որուն
 քեզ կը վճարէ . . . :

Բայց միթէ հիմայ երջանիկ կը գտնայ
 զինքը, — ո՛չ . ըստ որում իր մէկ բռնա-
 ւորի տեղ՝ այժմ երկուսն են:

Կը տեսնե՞ք, թէ շտայութիւնը մեր
 ընտանեկան յարաբերութիւնը ինչ զիր-
 քի մէջ կը դնէ: Մինչև հիմայ կը խնդա-
 յինք երկու ամուսին ունեցող կանանց
 վրայ: Իսկ կոմսուհին այժմ՝ երէքս ունի
 . . . և երանի թէ՛ այդ երեքով լիննար
 իր կեանքի սղբերգութիւնը . ո՛չ, նա
 դեռ շատ պէտէ տանջուի:

Ինչպէս ըսինք, իր երրորդ ամուսինը
 նոր բռնաւոր դարձաւ, հանգիստ չճգեր
 զինքը . կոմսուհւոյն մարմնով վատկած
 ստակը թղթախաղի կու տայ: Այդ բա-
 ւական չէ: Քանի մը տեղ կըսկսէ պար-
 ծիլ իր սիրուհւոյն վրայ, իսկ կոմսուհին
 ալ, այս ամենուն փոխարէն կ'սկսէ Պ.
 Լ. . . րէն սուելի ատել զինքը: Վերջա-
 պէս յուսահատուած, որ երիտասարդի
 մէջն ալ խորվեցաւ, կը մտածէ շրջա-
 ամուսին մ'ալ գտնել, որպէս զի, այս
 շրջորդը, անջի երկուքէն սուելի ազնիւ
 ըլլայ: Բայց այժմ ամենեւին հանգստու-
 թիւն չունի, չգիտէ թէ՛ առաջ որո՞ւն հա-
 յի . . . : Օրը 24 ժամ է, բայց կ'ուզէր

որ 48 բլայ : Ի՞նչ բնկ . արեւը չկրնար
կեցունել , անձարացած կրտսկ գանդ-
տիլ առ մէկ գործի : չեմ կրցեր հասնիլ
որ յայտնի սպացոյց է այս խօսքերը իր
շատ անշանց ծ իրաւ ըլլալուն . . . : Վեր-
ջապէս , շատ մը աշխատելն ետքը կրցաւ
իր գլխ հանդ ամանքները այնչափ շտկել ,
որ իր սիրողներէն ե ոչ մէկը վիրաւորե-
լով կրցաւ ժամանակի մեծ մասը իր իս-
կական ամուսնոյ հետ անցընել , որ զար-
ձեալ այնպէս է համոզուած՝ որ իր կինը
— հրեշտակ մ'է . . . :

Գլխով , ախար բէք թէ՛ հիմայ գիշ մը
հանցիստ է զժրաղց կինը , բառ որում
իր սիրած ամուսնոյն հետ կը բնակի : Այն
հիմայ ուրիշ անհանգ ստույթիւն ունի :
Սմուսինը կը սիրէ իրաւ է , բայց կը վախ-
նայ հետը քնանալ , որովս զի , քունի
ատենը իր սիրողներուն անկուն անունը
չտայ . . . : Յորեկը ախար այցելութիւն
ընէ սիրողներուն . այսօր մէկուն , վաղը
մէկալին , իսկ զիշերները , թէեւ ան-
կողնակից կ'ըլլայ ամուսնոյն հետ , բայց
մեծ մասը ստիպեալ է արթուն մնալ :

Բաւական ժամանակ շարունակեց չը
գնանայ . տեսակ մը տկարութիւն եկաւ

գիրան , քունը վախաւ աչքերէն և ո՞վ
սարսափ . . . : գեղեցիկ օր մը նկատեց
որ , — իր գեղեցկութիւնը քիչ մը պակ-
սեր է . . . :

Այդ միջոցին սկիւ ծարաւը , սկսեց սա-
տիկ տանջել զինքը : Իր զուարճութեան
և փոթորկալից օրերը երազի պէս ան-
ցան : Գեղեցկութիւնը՝ որով կրցեր էր
այդ ամեն բանը ընել , նաւորան աւելի
նշանը ցցոց . . . ուստի , այժմ պիտի
չտապէ որ իր ապագան ապահովէ . . .
և ահա ներկայացաւ իր սիրողներէն ա-
ռաջինին , Պ . Լ . . . բին և յայտնեց որ
ինքը ժլատի մէկն է եղեր . շատ արժան
է դներ զինքը , ախար աւելցընէ իր թո-
շակը : Սխաւ սպառնալ , որ կը ձգէ զին-
քը . նորէն ազնիւ կեանք կըսկսէ վարել .
այս կ'ընէ . այն կ'ընէ ևսլն . . . բայց
որչափ զարմացաւ , երբ սիրողը՝ փոխա-
նակ աղաչելու , փոխանակ համոզելու որ
չընէ այդպիսի բան մը , հովանոցը ձեռը
տուաւ և դուռը ցցուց . . . :

Հաւատասնը ընթերցող , ո՞վ էր այս
բանը ընողը , — այն ցատքատող հա-
ցուստը . բայց զո՞վ անպատիւ ըրաւ և
փռնտեց իր տունէն , այն բարձր ազնուա-

կան կնոջ, այն կոմսուհւոյն, որոյ ընտա-
նիքի մասին աւանդութիւնը շատ բան կը
սլատմէ . . . :

«Ալ հիմայ շատ յարմար միջոց է, պիտի
ըսէ ընթերցողը, ձգել զամենը և առջի
ուղիդ ճամբան դառնալ» :

Ո՛չ, նորէն չպիտի կարենայ, ըստ ու-
րում Պ. Լ. . . ըլ՛ միշտ իր պարագերուն
կէսը կ'վճարէր իսկ մնացածը, խաղընկելով
անվճար կը թողուր, որպէս զի, իր սիրու-
նին միշտ իրմէ կախումն ունենայ, շու-
սլըստամբի և չձգէ վիճքը :

Կը տեսնէ՞ք այժմ նորէն զինքը սիտի
ծախէ (թէ և աւելի վար գնով . . .)
որպէս զի, պարագերը վճարէ և ամուսինը
բան մը չիմանայ, որ ըսել է թէ՛ իր առ-
ջի պատմութիւնը նորէն կը սկսի :

Քիչ մը ասդին անդին զարնուելէն ետ-
քը — հարուստ սեղանաւոր մը գտաւ .
բայց շատ կարճ միջոց, ըստ որում, թէ
ինքը առաջուան սկս գեղեցիկ շէր, և
թէ սեղանաւորը միւսներու սկս անխելք
վատնող մ'էր, մինչդեռ ինքը կոմսուհին,
իրրեւ շուսլութեան հարազատ զաւակ,
անոր կաթովը մեծցած՝ դարձեալ փայ-
լիլ ևս առաւել փայլիլ կ'ուզէ . . . :

Այս անգամ ալ բարկացած՝ ինքը վաճառեց
ժլատ սեղանաւորը և մտածեց վերջին
փորձ մ'ալ ընել և ուրիշ օրինաւոր հա-
րուստ մէկը գտնել . . . :

Այս վերջին յարաբերութիւնքը՝ իրաւ
որ վերջինը եղան, ըստ որում, շտաբ-
բերանը կը խօսուէր իր անունը . . . քիչ մը
ետքը քէն որքէն վիճքը առնելու համար,
քիչ մ'ալ ետքը՝ ծանօթ ընտանիքներու
դուռները փակուեցան իր համար . մի
քանի կանայք, փողոցի մէջ հանդիպած
ատեն, սկսան փախչիլ իրմէ, ուրիշ փո-
ղոց մը անցնելով՝ միով բանիւ, տարա-
ձայնութիւնը հասաւ ամենուն ականջին
և ահա՛ դժբաղդ ամուսինը, որուն այդ
դժբաղդ կիներ դեռ կը սիրէր, պատա-
հարար ինչպէս քուր ճշմարտութիւնը . . . :

Ի՞նչ խօսքս կը վերաբերի արնիւ մար-
դոց և պատիւ ճանչցող ամուսիններուն
և ոչ թէ այն յիմարներուն (կամ ինքը
անուն մը գտիլը ընթերցող), որք այդ
պարագայից մէջ յօժարութիւն ետաւր կը հնա-
պանդին այդ նոր դրութեանը և իրենց
կանանց սիրողներու հետ՝ իրենք ալ կ'ապ-
րին : Այդ պարունները՝ որոնք դժբաղ-
դարար շատ են — տւելի սասոր են քան

Թէ որ և իցէ յանցաւոր մը, ուրեմն, դոցա մասին՝ չարժէ բան մը խօսիլ:

Բայց երեւակայեցէք ձեզ ազնիւ մարդ մը, ազնիւ մտաւոր մը, որու կիներ սիրողներու ունի: Ի՞նչ ընէ այդ ողորմելիին: Կար այնպիսի ժամանակ մը որ, այդպիսի պարագայի մէջ մեծամարտութեան կը հրաւիրէր իր կիներ մտորեցընող հակառակորդը, կամ կը սպաննէր և կամ ինքը մեռնելով՝ իր հանգստութիւնը գերեզմանի մէջ կը գտնէր. իսկ ներկայիս մէջ, երբ շոտլանդութիւնը այնպիսի դրութեան մը մէջ կը ձգէ զկիներ, որ ինքն ալ չէ կրցեր հասնել թէ՛ — քանի՞ «խրոնիկ» «նի», ի՞նչ ընէ այդ ողորմելիին: Ար՞՞ն զիմէ ամուսինը և որքո՞ պահանջէ իր պատիւը: Առաջինին, բայց ո՞վ կրնայ ըսել թէ՛ «նշուշ» նա եր «տառ» նը, որ արատաւորեց իր կիներ իսկ երկրորդ, երրորդ և տասներորդներն ալ այն կրնան ըսել վիրաւորուած ամուսնոյն՝ ինչ որ նորերս մէկը ըսաւ.

— Իս քո կինդ ստացեր եմ այս ինչ անձէն, որ ինքն ալ Պ. Մ. . . էր ստացեր. քոյ դոյութեանդ մասին ոչ ես, և ոչ ինքը տեղեկութիւն ունէինք. Աստուած սիրեա հանգիստ ձգէ զիս . . . :

Ի՞նչ կրնայ ընել. քրիստոնեայ տէրութիւններու օրէնքը «նշուշ» է իր կրցածէն աւելի բան մը ընել. այն է — հեռու բնակիլ այդպիսի կնոջմէ, զաւակները իր քովը առնուլ և մէկ մ'ալ երեսը չօնսնել: Այդպէս ալ կոստուհոյն ամուսինը վարվեցաւ, իսկ ողորմելի կիներ մնաց միայն, և օր քստ օրէ աւելի ստոր իյնալով՝ քոյրսգլին իրվեցաւ անասակաւեան «խրոն» մը. այժմ՝ կարելի է գինքը տեսնել երեկոյեան ատենները որ, անցորդներէն հաց կը մուրայ . . . : Նա դեռ գեղեցիկ է և գինով ատենը կը սկսէ դառն արտասուքներով պատմել իր մօտիկ անցեալը իսկ երբ կը սկսեն խօսիլ իր զաւակի վրայ, յուսահատ կատաղութեամբ կը զարնէ ու կը խածնէ գինքը և մաղերը փրցունելով վայրենիի պէս կը պոռայ փողոցներու մէջ՝ մինչեւ որ ոստիկանութեան զինւորները ստիպեալ կ'ըլլան բանտը տանիլ գինքը . . . :

Իս ըսի զաւակները, ի՞նչ կ'ընեն արդեօք անոնք այն ատեն, երբ մայրերնին իրենց զարդերով՝ գիշերահանդէսներով և սիրողներով կը պարապին: Անոնք կը մնան ստնտուհիներու կամ վարժուհեաց

խնամատարութեան ներքոյ : Անցեալ
աշնան , Տիւրքի ալդի մտտօքը անց-
նելու ատենս , հինգ տարուան փոքրիկ
աղջիկ մը վազելով մտեցաւ ինձի ար-
տասուալից աչքերով : Հաղած զգեստը
չատ շքեղ էր , բայց գլխու ծածկոցը
աւրուած , գուբայի վերի ծայրերի մէկը
կապած իսկ միւսը բաց , իսկ ստնտուն
ալ մէկ կողմ կեցեր և կը խնդար նա-
ւաստիներու հետ : Խեղճ երեխան ձեռ-
քէս բռնելով ըսաւ , ցուցնելով իր հա-
տակալից երեխաներու փոքրիկ խմբակի
մը վրայ :

— Երթանք միասին , ըսէ անոնց , որ
խաղան ինձի հետ և ոչ թէ զարնեն :

— Ինչո՞ւ չէք ուզեր խաղալ ասոր հետ
հարցուցի երեխաներէն մէկուն , որն որ
մէկալներէն քիչ մը աւելի հասակով էր :

— Մայրիկա — բէնէր է ատոր հետ
խաղալ :

— Ինչո՞ւ է արդիւեր :

— Արովհետեւ ասոր մայրը հիմայ այն-
պիսի կին մը դարձեր է , որուն հետ
այժմ ծանօթ ըլլալն անհրե՛լ է :

Կը տեսնա՞ք , արհամարհանքը դէս 'ի
մայրը , զաւակներու վերայ ալ կ'անցնի ,

երոնք ամենեւին մեղք չունին և չեն
կրցեր հասկնալ , թէ ինչո՞ւ կը հարածեն ,
ինչո՞ւ կը դարնեն զիրենք : Եւ ո՞րչափ շատ
են այս տեսակ մայրերէն բաժանեալ և-
րեխայք : Մայրական աչք մը կրնայ ան-
միջապէս երեխաներու խումբին մէջ նկա-
տել ասոնց մայրապաշտներու հասարակաց
պարտէ՛ղ մէջ . . . որոնք թէ և շքեղ
բայց ճաշակով չեն հաղուած և իրենց
ստնտուններու հետ այդ տեղերը գրօ-
նելու կ'եննեն : Կան այնպիսիներն ալ , ո-
րոնք զիջեցօթիկ դպրոցներու մէջ ըլլա-
լով կիրակի և տօն օրերը երբ ուրիշ-
ները տուններնին կ'երթան , ասոնք կը
մնան դպրոցի շորս պատին մէջ , կամ
այդույ մէջ կը թափառին որը իրենց հա-
մար կատարեալ բանտ կը դառնայ . . . :

Խեղճ երեխան կըսկսէ զգալ թէ իր
վրայ սլատիժ մը կը ծանրանայ , որուն
ինքը արժանի չէ . կը սկսի զայրանալ այս-
պիսի անիրաւութեան դէմ և չէ
կրցեր հասկնալ թէ՛ ո՞վ է իր թշնամին ,
կըսկսի ամէնք էր ինչ-՞ մի հա՛մարել և
զգացած ատելութիւնը դէպ 'ի ամեն
մարդ՝ կը թունաւորէ իր սիրտը և անտ
ապագային հասարակութեան համար

անգամն և անխելճ՝ ժեկը կը պարբարազէ :

Այո՛, տղաները միշտ անհանգստութեանց պատճառ կ'ըլլան, ապականեալ և շուայլ կանանց համար, անոնց աշխարհային զուարճութեանց արգելք կ'ըլլան և յամօթ և 'ի նախատինս այժմեան պճնասէր մայրերուն, — իրենց յղի ըլլալին անգամ մեծ դժբաղդութիւն կը սեպեն, որմէ հարկ է կերպով օգուտել . . . Ասոնք կը զայրանան և առանց ամչնալու կը գանգափն . . . այս գանգատը կը շարունակէ մինչև երկու ամիս վերջը, ալ կը դադարէն քանիտեկ . . . բայց այդ դադարելու փոխարէնը այն կ'ըլլայ որ, — երկու, երէք քաղաքներէն ժեկը կորսնցոսց, նախ քան անոր լայն աշխարհ դեռնելը

Նորերս ծանօթացայ այդ ազնուական դասի կանանց մէկու մը հետ՝ որուն կեանքը շատերուն յայտնի է իր սիրահարական արկածներով: Մեր ծանօթութիւնը պատահաբար երկաթուղւոյ մէջ եղաւ, որն որ առանց խօսնելու հետեւեալ խօսակցութիւնը բացաւ ինձի հետ :

— Երբ հաւատաս պարոն, չնայելով որ

դեռ այսչափ երիտասարդ եմ, տասն և երկու անգամ յղացեր եմ :

— Տասն և երկու զաւա՞կ, ի՞նչ կ'ըսես, պատասխանեցի զարմացմամբ :

— Ո՛չ, անմիջապէս ժպտելով ըսաւ ինձ, տասն և երկու անգամ յղացեր եմ, բայց երէտ զաւակ միայն ունեցեր եմ :

Այդ միեւնոյն կինը՝ սկսաւ համոզել զիս, որ փարիզի մէջ՝ «երախայոց ոչնչացընելը» նախ քան ծնելին . . . » շատ սովորական բան է դարձեր, որ փարիզու կանանց յայտնի է այն անգամ մը որոշուած գինը՝ որն որ կը վճարվի «արհեստական վէճման հը համար», — երեք հազար ֆրանկ, ոչ պակաս և ոչ աւելի :

— Անուական գեղեցիկ կին մը՝ ստակի սաստիկ կարօտութիւն ունէր, որուն չափազանց սիրահարուեր էր մէկը : Գրեթե բողոքարար, երիտասարդ կինը այդ միջոցին յղի էր, ի՞նչ ընէր, շուտ մը արտասահման գնաց և այն տեղ արհեստական կերպիս աւրեց երախտան : Իրաւ է, ես իր կեանքը վտանդի ենթարկեց, չաւանջուց ինձ հետ խօսող կինը, բայց ասոր փոխարէնը՝ այժմ տատը սքանչելի ձիւն . . . նի կապած աշտուի մէջ :

Ես ըսի որ չեմ հաւատար սրամու-
թեանը :

— Կրնաս չհաւատալ , բայց ես քեզ
կ'ըսեմ որ, այժմ քիչ կին կայ , որ անգո-
հը գոնէ ենթարկուած չըլլայ այդ արհես-
տական վիժմանը : Գիտե՛ս արդեօք , թէ
ինչէն է առաջացեր այսպէս ըսուած « Կ-
նոց հի-անդո-թիւնը » որ ներկայիս մէջ
այդչափ շատցեր է . մեծ մասը այդ վի-
ժելէն է առաջացեր . . . :

Այսպէսով շոտլանթիւնը ապականե-
լով հոգին , կը սկսէ աւրել և կանանց
մարմինը , որուն կը հետեւի անառակու-
թիւնը , որու մէջ ինչալով կ'ինը՝ կը մոռ-
նայ ամեն յարգանքը դէպ 'ի գինքը : Ա-
մենահարուստ կիները անաղին ծախքեր
կ'ընեն , որպէս զի կարող ըլլան առան-
ձին՝ հո՛նքի ստեղծել : Ասոնցմէ շա-
տերը անառակ կանանց նման « Ժանաւոր
դուներ ունին » : Գեռ նորերս կը խօսէին
չորս ազնուական կանանց համար , որք
կանոնաւոր կերպիւ կը ժողովուէին , որ-
պէս զի անբարոյականութեան այսպէս
ըսուած « Երեւոյ—գիշերը » անցունեն ,
որն որ անառակութեան ամենէն ազեղ և
ամօթալի գործողութիւններէն մէկնէ . . . :

Ես բան մը չեմ աւելցնէր , այլ կը
այտմեմ այն , ինչ որ Քոյի Քոֆրաները
չեն գիտէր . . . Փարիզու կանանց մեծ
մասը իրենց հաճոյքը կատարելու համար ,
ամեն միջոց 'ի գործ դնելը սուրբ կը հա-
մարեն : Այս ծայրայեղ ազեղութիւնքը
աւելցան մանաւանդ այն ժամանակէն
'ի վեր , երբ սկսաւ ամօթալի աճուրդը
— կանանց աճուրդը : Այո՛ , շոտլանթիւնը
կանայք անբարոյական ըրաւ , ատկէ հե-
տեւեցաւ անառակութիւնը , իսկ վերջինս
ալ սկսաւ երիտասարդներու ազնիւ ըզ-
գացմունքները աւրել . . . :

Այն մը , երբ ստակի կարօտութիւն
ունի , որպէս զի կարողանայ փայլել ,
զարդարուիլ , ամեն միջոցներ 'ի գործ կը
դնէ և կը գտնայ վերջապէս : Նա կը սկսի
խաղալ իրեն հետ , ինչպէս լաթի մը հետ ,
ինքը զինքը անգամ յարգելէ կը դատարի :
Մէկը դեղերով կը սպաննէ երախտան ար-
գանդին մէջ , իսկ ի՛նչ կ'ըսէք ուրիշ կում-
սուհոյ մը , որ սխալահանդէսի մը գիշեր
3000 Ֆրանկի կարօտութիւն ունենալով՝
այդ ստակները իր կառավարէն ստացաւ .
. . . : Ըսե՛ք թէ ինչու համար , չէ՞ որ
պարտ էր վճարել իր դերձուին :

Կանանց դերձակ . . . — անասակու-
թեան ամենաստոր արարածները , շուայ-
լութեան պաշտօնեայները , այս ապա-
կանեալ ժամանակի այր—Ֆլնորդները
երեւելի արուեստագէտներ պարտադրու-
կանանց հարուստներու համար
երեւելի հնարագէտներ և խորհրդա-
տուներ :

— Մանեկին չեմ կարող խոստանալ
այդ գլխարկը չեմ կրցեր ըմբռնել
երեւակայութեանս մէջ՝ անոր գծագրու-
թիւնը : Վաղը ե՛կ կամ մէկալ օր
կը խօսինք . թերեւս համաձայնինք :

Ուրիշ մէկն ալ կ'ըսէր իր խանութի
աշխատաւոր օրիորդներուն :

— Այսօր ինձ ոչինչ մի՛ հարցնէք , ջղա-
յին թուլութիւն մը կ'ըզգամ հրա-
մայեցէք կռօքը պատրաստեն , պիտի
դրօսնում :

Երրորդը իր այցելուհիներէն գեղե-
ցիկները թէյի , սուրճի , լիմօնաջուրի կը
հրամայընէ . ինքը կանափէի վրայ կէս մը
պառկած՝ յանկարծ կ'ընդհատէ խօսակ-
ցութիւնը և կը սկսէ մտածել : Շատ
հասկնալի է որ դիմացի նստող գեղեցիկը
այս պիտի հետեւցընէ ճիմայ ինձի հա-
մար կը մտածէ խեղճը :

Միեւնոյն դերձակը սաստիկ զառնուեր
էր գեղեցիկ կնոջ մը , որն որ իրեն 350,000
Ֆրանկ պարտական էր . ուրիշ կին մ'ալ
պարտ էր միեւնոյն դերձակին 600,000
Ֆրանկ , ընդ ամենը 950,000 պարտք :
Այս երկրորդի ամուսինը վճարեց իր կնոջ
պարտքը . իսկ առաջինը , մնաց անվճար և
դերձակը հարկաւ ատոր փոխարէն՝ իրա-
ւունք ունեցաւ աւելի և աւելի մտերմա-
նալ հետը և որուն այնպիսի նոր
զարդերով գեղեցկացուց որ , տեսակ մը
զարդերու յեղափոխութիւն մը յարոյց
դքսուհիներու և բարձր ազնուականաց
ակումբին մէջ : Հասկցէք այս ինչ զար-
դեր էին :

Քանի մը անգամ ըսի որ , զգեստի և
փայլելու համար , այժման կանայք ա՛ն-
բան սոքի սակ կ'առնան : Միեւնոյն
դերձակը առաջարկեց ուրիշ բարձր ազ-
նուական կնոջ մը որ իր ստեղծած նոր
զարդի փոխարէնը՝ համաձայնի իր կինը
հրաւիրել այն պարահանդէսին , որն որ
այդ վերոյիշեալ ազնուական կինը պիտի
տար և ասանկով դերձակուհի օ՛ր կրցաւ
ներկայ դատուիլ դքսուհիներու պարա-
հանդէսին :


Մենք, դերձակուհեաց մասին նախա-
պաշարեալներէն չենք, բայց ասով կ'ու-
ղենք ըսել, որ ասկէ քսան ասարի առաջ՝
այդ ազնուական տիկինը խենդերու կար-
գը կը դնէին, բայց այժմ, ասոնք հա-
մողուած են թէ՛ իրենք այնպիսի պարա-
զայից մէջ կը դռնուին ծախքերու պատ-
ձտուաւ, որ ուրիշ կերպ չեն կրնար վար-
վիւ :

Ահա հազարաւոր օրինակներէն մէկն ալ .

Դերձակ մը պիտի պատրաստէր երե-
ւելի ազնուական կնոջ համար այնպիսի
ամենասուղ մետաքսեայ նորածեւ շապիկ
մը, որով՝ այս ազնուական կինը՝ (ինչպէս
ինքը կը հաստատէր) պիտի յաղթէր իր
հակառակորդուհւոյն՝ որ զամենքը զմայ-
լեցուցած էր իր նորագիւտ և շքեղ զգես-
տովը : Աղէկ չէ՞ր ըլլար եթէ ըսէինք թէ՛
այդ շապիկը նա կ'ուզէր գալիւ ու այնտէ՛ր
հակառակորդուհւոյնի, բայց քիչ, որուն
կ'ուզէր հաճիլ :

Հ. Բ. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.
29 CENT 95
Պ. Ե. Բ. Ձ.
Հ. Բ. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.
Հ. Բ. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Ս. յ. Կի-ի-ի. շարունակելով իմ շարքը
որտե՛ր է «ՄԵՐ ՈՒՆԻ—ՀՐԷՇՆԵՐ» :



ՀՀ Ազգային գրադարան



NL0341057

9